ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻ.

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Զեկ. Համայնքի ղեկավար Ե. Կարապետյան

Ժողովին մասնակցում էին 39 մարդ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը, ժողովի մասնակիցներին հակիրճ ներկայացրեց 2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ առկա հիմնախնդիրներին, վեր հանեց թերություններն ու բացթողումները:

Համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը հարկ համարեց նշել, որ տարբեր օբ-յեկտիվ և սյուբեկտիվ պատճառներով մեծ է չմշակվող հողատարածքների տեսակա-րար կշիռը, որը կազմում է շուրջ 88.0% հանգամանք, որը խիստ մտահոգիչ է և միաժամանակ դժվարացնում է սեփական եկամուտների հավաքագրման գործ-ընթացը: Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2013 թվականի առաջին կիսամյակում բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին, նշելով որ ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը համայնքի վարչական տարածքի մի հատվածում տեղի ունեցավ ցրտահարություն,որի հետևանքով զգալի վնաս պատճառվեց հողի մի շարք սեփականատերերի,սակայն մարզում հետագայում տեղի ունեցած ահավոր կարկտահարության ֆոնի վրա այդ մասին չբարձրաձայնվեց: Այն իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների վրա՝ որն առաջին կիսամյակի կտրվածքով ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում:

Ց Ո Ւ Ց Ա Ն Ի Շ Ն Ե Ր	Նախատեսնված / հազ. դրամ/	Փաստացի / հազ. դրամ/	կատարման %-ը
Ընդամեին սեփական եկամուտներ	4764.0	2648.3	55.6
Հողի հարկ	1750.0	1224.0	69.9
Գույքահարկ	2754.0	1350.9	49.1

Տեղական տուրքեր	125.0	73.4	58.7
Գույքի օտարումից եկամուտներ	-------	----------	---------

Այնուհետև համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին:

1. Տարրական դասարանների շուրջ 130 աշակերտների և «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 65 երեխաների համար տոնական նվերների ձեռք բերում և բաժանում:
2. Կանանց մեկամսյակի առթիվ միջոցառումների կազմակերպում գյուղապետարանի, դպրոցի և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կին աշխատակիցների համար հանդիսությունների կազմակերպումով:
3. Մասնակցություն և նվիրատվություն դպրոցում և «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ -ում կազմակերպված տարատեսակ միջոցառումներին:
4. Համայնքի դպրոցի, աշխատակիցների մեկօրյա հանգստի կազմակերպում Դիլիջանում:
5. Համայնքի ազգաբնակչության մի հատվածին /Կոմիտաս փողոց/ ոռոգման ջրի մատակարարման ջրագծի հիմնանորոգում, երկաթյա խողովակների փոխարինում նորով:
6. «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի երկրորդ հարկի հյուսիսային հատվածի պատուհանների փոխարինում եվրոպատուհաններով:

7.Մանկապարտեզի համար անկողնային պարագաների / բարձերի / ձեռք բերում:

«Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի երկրորդ հարկի մի հատվածում շերտավարագույրների անցկացում:

8. «Նորակերտի մանկապարտեզ» Հռակի շենքի բակի բարեկարգում:
9. «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի 2-րդ հարկի մի հատվածի հիմնանորոգում, դռների փոխարինում նորով:
10. Համայնքի փռստային բաժանմունքին կից նախկին հեռախոսակայանի շենքի /հանգստի սենյակի / հիմնանորոգում և ներքին հարդարման աշխատանքների կատարում, դռների և լուսամուտների փոխարինում նորով:
11. Համայնքի գլխավոր փողոցների /Թումանյան և Կոմիտաս/ ցերեկային լուսավորության լամպերի ձեռք բերում :

12.Համայնքի սոցիալապես անապահով շուրջ 40 ընտանիքների սոցիալական օգնության տրամադրում

Համայնքի ղեկավարը հարկ համարեց նշել, որ համայնքը իր պատրաստակամությունն է հայտնել մասնակցելու ներտնտեսային ոռոգման ցանցի հիմնանո-

րոգման որևէ ծրագրի՝ համաֆինանսավորման սկզբունքով,որի համար առանձնացվել է շուրջ երեք միլիոն դրամ;

Այնուհետև համայնքի ղեկավարը նշեց, որ չնայած կատարված զգալի աշխա - տանքներին, այնուամենայնիվ համայնքում շատ են տարիներ շարունակ իրենց լուծմանն սպասող մի շարք հիմնախնդիրներ, որի մեծ մասը համայնքը ի զորու չի իր սուղ միջոցներով իրականացնելու՝ դրանք են.

ա/ Համայնքի ներտնտեսային փողոցների վատթար վիճակը

բ/ Ոռոգման և խմելու ջրագծերի մաշվածության բարձր աստիճանը

Այստեղ հարկ է նշել, որ Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ հավաստիացնում են, որ համայնքում մոտակա օրերին կսկսվի ներտնտեսային խմելու ջրագծերի նորով փոխարինման աշխատանքները,որին անհամբերությամբ սպասում է համայնքի ազգաբնակչությունը:

գ/ Դպրոցում մարզադահլիճի բացակայությունը

դ/ Համայնքի մշակույթի տան և մանկապարտեզի շենքի վերանորոգման հրատապությունը և այլն:

Ի դեպ վերջին երեք չորս տարիներին համայնքի սուղ միջոցներով զգալի ներդրումներ են կատարվել մանկապարտեզի շենքի վերանորոգման ուղղությամբ,սակայն համայնքի ուժերով երկար ժամանակ կպահանջվի շենքը ամբողջովին նորմալ վիճակի բերելու համար:

Ելույթ ունեցան նաև դպրոցի տնօրեն Վ. Քոչյանը , «Նորակերտի մանկապար - տեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ս. Ասատրյանը, բուժ ամբուլատորիայի տնօրեն՝ բժշկուհի Հ. Աղախանյանը, որոնք իրենց խորին երախտագիտությունն արտահայտեցին գյուղապետարանի աշխատակազմին, հատկապես համայնքի ղեկավար Ե. Կարապետյանին իրենց ղեկավարած ոլորտների հանդեպ ցուցաբերած ամենօրյա հոգատարության և նյութական ու բարոյական շարունակական աջակցության համար:

Վերջում համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հավաստիացրեց, որ այսուհետ ևս ավագանու, գյուղապետարանի աշխատա- կազմի և անձամբ իր կողմից հնարավոր ամեն ինչ կարվի համայնքի առջև ծառացած խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու և հնա - հավորինս լուծում տալու համար:

Համայնքի ղեկավար՝ Ե. Կարապետյան

10- ը հուլիսի 2013 թվական գ. Նորակերտ